



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



« 29 » 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐԴԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0216 21

Ձեռնարկողը՝

«ԱՐ - ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Երևան, Ազատության պողոտա, շ-12/3, 25 բն.

Գործունեությունը՝

Արամուսի բազալտի հանքավայրի Սալմաստ տեղամասում
2021-2022թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
Կոտայքի մարզի Արամուսի համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Է. Մարտիրոսյան

07-013-0161-0041, 07-013-0161-0042, 07-013-0161-0043, 07-013-0161-0044, 07-013-0161-0045 - քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող, 07-013-0161-0036, 07-013-0161-0063, 07-013-0161-0039 - համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողեր, 07-013-0161-0080 - համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր, 07-013-0161-0064 - համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք:

Բազալտների հետախուզման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն հորատման, փորձնական արդյունահանման և ավտոտրանսպորտի շարժման հետ: Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակրևային և գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Երևակման տարածքում զարգացած են 0.2մ հզորությամբ շագանակագույն հողերը: Ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները, որոնք միայն վերականգնվելու են: Բազալտի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի:

Սալմաստ տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մեղմացման նպատակով օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ՝ հետևյալ բնապահպանական միջոցառումները.

Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում, որը կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով: Օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Վերամշակող ընկերության հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո:

Կենցաղային աղբը կհավաքվի հատուկ պարկերի մեջ և կտեղափոխվի մոտակա աղբահավաք կետեր: Թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքեր կտեղադրվեն տարածքում:

Փոշենստեցման նպատակով ջրցանում կկատարվի երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում: Փոշենստեցման նպատակով և անձնակազմի կենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը կմատակարարվի պայմանագրային հիմունքներով մոտակա Արամուս բնակավայրից:

Կեղտաջրերը կհավաքվեն հորատի պ զուգարանում, որը հետագայում կդատարկվի հատուկ ծառայության ուժերով:

Խախտված լանդշաֆտի վերականգնում, ինչի նպատակով



փորվածքների անցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ հողի վերին շերտը նախատեսվում է հանել, կուտակել անմիջապես փորվածքի և հարթակի կողքը: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով խախտված տարածքները նախատեսվում է ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են ձեռքով, անմիջապես աշխատանքների ավարտից հետո՝ հետախուզական աշխատանքներին մասնակցող անձնակազմի ուժերով:

- Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝
- գենֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը
 - կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը
 - կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը
 - կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը

Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երևակման տարածքում բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով՝ առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում օգտագործվող նավթամթերքի և քսայուղերի պահեստավորում չի նախատեսվում, քանի որ տեղամասը գտնվում է նավթամթերքի և քսայուղերի լիցքավորման կայանների մոտ: Տրանսպորտի ամենօրյա մեկանգամյա լիցքավորումը բավական է: Կենցաղային աղբը՝ սննդի մնացորդներ, թուղթը, տեքստիլը, պլաստմասսա կիավաքվեն առավելագույնը 35լ տարողությամբ աղբի տոպրակներում, կտեղափոխվեն մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար կոմունալ ծառայության կողմից կտեղափոխվեն մոտակա աղբավայր:

Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանվելու են Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Պատճառաբանական եզրահանգումներ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև և սեզոնային, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Արամուս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության,



կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում,
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը,
- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- կեղտաջրերի հավաքում դաշտային հորատիպ զուգարանում,
- հողի բերրի շերտի պահպանում համաձայն ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N1404 որոշման,
- աշխատանքների ավարտից հետո հայտով նախատեսված ռեկուլտիվացիայի իրականացում,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով,
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐ- ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Սալմաստ տեղամասում 2021 - 2022թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Կ.Հարությունյան

